# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**12 հոկտեմբերի 2021 թվականի N 411-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 408-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ Իննա Բալայանի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի զեկուցագիրը՝

**որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի ««Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար հանձնաժողով ստեղծելու մասին» N 408-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2" Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Քնարիկ Բալասանյանի՝ աշխատանքի ներկայանալու օրվանից եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:»:

12.10.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 12
ք. Կապան